րոյ ընդունեցաք զինքն իբրև զառաքելական այր. որպէս ի շուրջաբերականն գրեալ կայր, թէ հասկ և թէ չհասկ, զանկարծամահէ և զկանամբի, և զամենայն որ Սուրբ Էջմիածնի մուտքն էր՝ տվաք լիով անթերի ի ձեռն Տէր Մարտիրոս եպիսկոպոսին. զառածն ինքն իւր հոգովն թող պատմէ ձեզ: Դարձեալ տվաք հրամնուցդ ք[1] արծաթ կրօշ աջահամբոյր, և մէկ լավ շուրջառ բոլոր զգեստիւ առանց վարշամակի, տվաք Սուրբ Էջմիածնին: Խ. Ծ.[2] տուն հայ կամք բնակեալ ի մէջ Իլով քաղաքի: Աստուած իւրեանց պարաքատ[3] տայ. աղէկ ընդունեցին, և աստուածապէս հարկիս արարին, և աղէկ ողորմութիւն տվին ի մարմնաւոր ընչից իւրեանց, որն շատ, որն սակաւ ըստ կարեաց իւրոց, և զինքն աղէկ սիրտով ճանապարհորդաց: Տէր Մարտիրոս եպիսկոպոսն ինչպէս որ տեսաւ աչօքն՝ այնպէս թող պատմէ:

Դարձեալ ծանուցանեմք հոգևոր տեառնդ մերոյ զմեր սակաւութիւնս ի մէջ այլասեռից. ամէնքս ազգատակ եմք, խառնակիլ եմք հետ միմեանց, ոմն ազգակցութեամբ և ոմն խնամութեամբ. չի լինիր որ այս բանս ի մեր մէջն չլինի: Երթամք ի Ֆռանկէ և յՈւռզէ աղջիկ առնումք և աղջիկ տամք, հաւատոց պատառում կը լինի, և յետին չար կու լինի քան զառաջինն. լաւ է մանաւոր չար լինալու քան զբուն չար: Տէր Մարտիրոս եպիսկոպոսն ինչպէս որ զմեր նեղութիւնս աչօքն տեսաւ՝ հոգովն թող պատմէ: Հրամանքդ մեզ հոգևոր հայր ես և մեք քո հնազանդ ծառայքս. խղճայ մեր անճարակութեանս. ժողովք արա՛, գլուխ եպիսկոպոսաց և գլուխ վարդապետաց, և մեր բանն առաջի ձեր առնուք և աղէկ քննութեամբ մեզ բարի ճանապարհ ցուցանէք. որպէս սուրբ հարցն կանոնքն կու հրամայէ, «Առաջնորդ ըստ ժամանակին իւրոյ ստասցի զյառաջնորդութիւնն իւր»: Ցայսմ ժամանակի ի վերջին յաստուածային օրինացն սառուցեալ են ազգք մարդկան. սառն ի վրայ սառի դնես՝ եղանակս ձմերան է, պինդ կու սառանայ յերկուց կողմանց. ինչպէս որ Հոգին Սուրբ տնօրինէ՝ այնպէս արէք: Ի մեր յառաջին հարցն աւանդութեան կայր ի մեր մէջն՝ Սալմաստեցուն ի վեր[4]: Որ բան որ յառաջ եղել է՝ մերձաւորութեամբ, հիմի այլ թող լինի: Այս մեր Տէր Մարտիրոս եպիսկոպոսն հոգևոր տիրոջն մօհրովն թուղթ եդիր ի միջիս, որ բան Էջմիածնի աթոռոյն շահ և օգուտ է՝ զայն հաստատեց. կու խնդրեմք ի քո Սրբութենէդ, որ այն կարգին և սահմանքին վերայ ձեր ձեռնագրովն և ձեր ծաղկաւէտ մօհրովն մէկ լաւ թուղթ ղրկես, որ մեր բանն աղէկ հաստատի. և թողութիւն տաս այս բանիս վերայ. զմեր խնդիրն անտես չառնես. համապազ մեք սուրբ Էջմիածնի ծառայն եմք, և ի ձեր ծառայութեան կանգնել եմք հոգով և մարմնով. և զսուրբ Էջմիածնի մուտքն և զՆվիրկին

1. Քանի՞ հարիւրի կամ հազարի թուանշան է:
2. Այսինքն իբրև 40 կամ 50 տուն:
3. Թրք. պէրէքէթ, առատ արդիւնք:
4. Որ է Ստեփանոս Ե կաթողիկոս, 1542–51: